

նապէս «շերեփով» կը ժողովէին կերակրոց փրփուրը (Վաստ. 103):

Տապակ: Մետաղեայ անօթ՝ յայտնի խորենացւոյն (87), Ս. Գրոց (Ղեւտ. Բ, 5. Բ Թագ. 2, 19. ԺԳ, 9) եւ այլոց: Արեւմտեայց քով ձուածեւ էր, տափարակ ու ծանծաղ յատակով, եւ երկար բունով մը (Դար. Դ, 1077. Վիգ. Դ, 477): Հրեայք կը գործածէին զայն խմորեղէն եփելու, եւ ըստ Հարանց վարուց նաեւ ձուկն (Հյկզ.): Նոյն պաշտօնը կը մատուցանէր մեր քով ալ. որով զեղծանելով Արտաշէս, հրամայեց զկրիւսոս «հանել յերկաթեղէն տապակ» (խոր. 87):

Շամփոշ: Երկաթեայ ծանօթ նուրբ եւ սրածայր ձողը, զոր կը գտնենք նախ Մնացորդաց հնագոյն թարգմանութեան մէջ (Ա, ԻԸ, 16. Բ, Դ, 11). եւ յետոյ յիշուած խորենացիէն, որոյ համեմատ Սմբատ Չեռուցանելով «շամփոշ երկաթի ի միս խորովեալ», յորում շատ յայտնի է գործւոյս պաշտօնը, կը բոլորէ ու կը պսակէ մատնիչ Մերուժանայ զլուխը (227):

Տաշտ: Ծագած պրս. տաշտ՝ կոնք բառէն (Հիւբշ. 251), էր փայտեղէն բոլորշի գոգաւոր անօթ մը, որուն կը հանդիպինք եգիպտական խոհանոցի կահուց մէջ (Վիգ. Բ, 1147), եւ զոր Ալաւկայ որդին